

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐ

BEDIKIAN A. A. *The Golden age in the fifth century*. An Introduction to Armenian Literature in Perspective. New York, Armenian Missionary Association of America, Inc., 1963, p. 128, ill.

Հրատարակելով Ա. Ա. Պետիկյանի «Ոսկեդարը V դարում» ուսումնասիրությունը, Ամերիկայի հայ միսիոներների ընկերությունը նպատակ է ունեցել հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ խոշոր իրադարձություն հանդիսացող հայերեն այբուբենի ստեղծման և Աստվածաշնչի հայերեն թարգմանության շրջանը ծանոթացնել անդերևն ընթերցող հասարակայնությանը:

Գրքի առանձին գլուխներում ներկայացվում են Կրիզոստոմ Լուսավորչի, Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, աստվածարան և փիլիսոփա Եղեիկի, Կորյունի և ուրիշների կյանքն ու դործը: Ցույց է տրված, որ Եղեիսիայից, Անտիոքից, Աթենքից, Աղեքսանդրիայից և Կոստանդնուպոլսից բացի Հայաստանն էլ է եղել մշակութային կարևոր կենտրոն՝ Արևելքում: «Հայաստանը աշխարհի քարտեզի վրա» զիջում հեղինակը ցույց է տալիս, որ Հայաստանը կարևոր տեղ է դրավում Արևելքի և Արևմուտքի միջև: Հեղինակը հակադրում է «Արևելքը արևելք է, իսկ Արևմուտքը՝ արևմուտք» տեսակետի կողմնակից պատմաբաններին, որոնք անջատման դիժ են քաշում Արևելքի և Արևմուտքի միջև:

«Պատմաբանների հայր» զլխում հեղինակը նշում է, որ հույն պատմաբան Հերոդոտին տրված այս տիտղոսը հայ ժողովուրդը շնորհել է Մովսես Խորենացուն «Հայոց պատմություն»

գրքի համար: Արժեքավորելով Մ. Խորենացու պատմության բացառիկ նշանակությունը իբրև պատմական սկզբնաղբյուրի, հեղինակը նշում է, որ այն 1723 թ. սկսած թարգմանվել է քաղմաթիվ լեզուներով և այժմ, բացի դարբար և աշխարհարար մի քանի հրատարակություններից, գոյություն ունեն նաև նրա լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, հունգարերեն հրատարակությունները:

«Եանաստեղծ պատմաբանը» գլուխը նվիրված է Եղիշեի «Պատմություն Վարդանի և հայոց պատերազմի մասին» գրքին:

Գրքի վերջին գլուխը նվիրված է Ղազար Փարպեցուն, այսպես կոչված «կրտսեր թարգմանիչների» ամենաերիտասարդ և վերջին ներկայացուցչին:

Վերջում տրված է եղրակացությունը և գրականության ցանկը: Գիրքը նկարադարգված է հին ձեռագրերից կատարված արտասպումներով: «Հայ ժողովրդի պատմության ոսկեդարը և այդ ժամանակաշրջանի զլխավոր դեմքերը» տախտակում առանձին սյունակներով և ժամանակագրական կարգով տրված են Պարսկաստանի և Հայաստանի իշխողները, կաթողիկոսները, կրտսեր և ավագ թարգմանիչները, ինչպես նաև նշանավոր ղեպքերը:

WALLIS WILSON D. *Fresno Armenians (to 1919)*. Edited with introduction by Nectar Davidian. Coronado press, 1965, p. 80

Վալիս Վիլսոնի հեղինակությամբ լույս տեսած «Ֆրեզնոյի հայերը» գիրքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում՝ «Հայաստան երկիրն ու ժողովուրդը» խորագրի տակ հեղինակը համառոտակի շարադրում է Հայաստանի աշխարհագրության, բնակչության, կրոնի, հայկական առաքելական եկեղեցու վերաբերյալ նյութերը, որոշ տեղեկություններ են տրվում հայերի սոսիալ. տնտեսական պայմանների, ինչպես նաև

հայկական սովորությունների, ազատագրական շարժումների մասին:

Գրքի երկրորդ և երրորդ մասերում, որոնք վերնագրված են «Հայերը», խոսվում է թուրքական հայաժանքներից ու հայաջինջ քաղաքականությունից տեղահան եղած ու աշխարհով մեկ սփռված հայերի, մասնավորապես Ֆրեզնոյի հայկական զաղութի մասին: Հայերը Ֆրեզնոյում բնակություն են հաստատել սկսած 1874 թ.: Ըստ

հեղինակի 1918 թ. Սան Զովեն հովտում կային 10 հազարից ավելի հայեր, որոնցից շուրջ չորս հազարը Ֆրեզնոյում: Հեղինակը նշում է, որ հայերը առաջինն են եղել, որ Ֆրեզնոյում պաշտպանվել են թղի ու սեխի մշակությամբ: Նրանց հաջողվել է մշակել նաև պարսկական, թուրքական, փասարայի, Զմյուռնիայի, Դիարբեքիի սեխեր և հայկական վարունգ, որոնք դառնում են առևտրի կարևոր ապրանքներ: Կենտրոնական և հարավային Կալիֆորնիայում, որտեղ հայերը արդեն պալի թիվ էին կազմում, պաշտպանվել են տարբեր արհեստներով, առևտրով և այլն: Այս գլխում հեղինակը խոսում է նաև Ֆրեզնոյում հրատարակված «Ասպարեզ» (1908 թ.), «Նոր

կյանք» (1914 թ.), «Սիսիվան» (1918 թ.) շաբաթաթերթերի մասին:

Գրքի երրորդ մասը հիմնականում նվիրված է ԱՄՆ-ի այդ հեռավոր անկյունում հայերի ծավալված կրթական, մշակութային և գեղարվեստական գործունեությանը: Հանգամանորեն են նրկարադրված Ֆրեզնոյի ավելի քան 30 հայկական դասական ընկերությունները և կազմակերպությունները: Գրքում տեղեկություններ կան նաև զաղութի կրոնական կյանքի, հայկական եկեղեցիների, հայկական կենցաղի և այլ հարցերի մասին: Գրքը խմբագրել և ներածականը գրել է Նեկտար Դավիթյանը:

Le rapport secret du docteur Johannes Lepsius sur les massacres d'Arménie. Paris, Imprimerie Moderne-Gardanne, 1966, p. 104.

Գերմանական Արևելյան Պատգամավորության և դերմանա-հայկական ընկերության նախագահ ղոկտոր Լեփսիուսի 1919 թ. Փարիզում լույս տեսած հանրահայտ գրքի որոշ բաղվածքների վերահրատարակությունն է:

Առանձին բաժիններով տրված են արևմտահայերի 1915 թ. տեղահանությունը, Անատոլիայի արևմտյան վիլայեթների վիճակը, կոտորածների

պատասխանատվությունը, թուրքական պատճառարանությունը, համախառնական ծրագրի հարցը և 1915 թ. դեպքերի մասին տեղեկություններ, որոնք ներկայացված են տարբեր դեսպանությունների փաստազրական նյութերով, օտարազգի ականատեսների վկայություններով և պաշտոնական հաշվետվություններով: Գրքի վերջում գետեղված են հեղինակի եզրակացությունները:

A GRADED WEST ARMENIAN READER. *Selections from Armenian Literature.* Adapted and Edited by James Etmekjian. American Council of Learned Societies and National Association for Armenian Studies and Research, 1963, p. 187.

Ավելի քան կես դար է, ինչ հայերենը ուսումնասիրվում է Միացյալ Նահանգներում: Ներկայումս Ամերիկայի մի քանի համալսարաններում անցնում են հայոց լեզվի դասընթացներ: Այս ընթերցարանը, որ արևմտահայ գրականության հատրնտիր ուսումնական դասագիրք է, նախատեսված է հայերեն այբուբենի հետ ծանոթ և մի քիչ էլ վարժ կարդացող անձնավորությունների համար:

Ժողովածուի նյութերը վերցված են XIX դարի վերջի և XX դարի հիմնականում արևմտահայ հեղինակների երկերից՝ հաշվի առնելով նրանց մանկավարժական և գրական արժեքը:

Գրքը բաղկացած է 3 մասից: Առաջին մասում (էջ 1—111) տեղ են գտել Ռուբեն Զարդարյանի, Հովհաննես Թումանյանի, Արփիար Արփիարյանի, Մելքոն Կյուրճյանի, Լևոն Բաշալյանի, Երուխանի (Սրվանդ Սրմաթեղխանյան) և Գրիգոր Զոհրապի ստեղծագործություն-

ներից նմուշներ: Յուրաքանչյուր պատմվածքից առաջ, որը տրված է հայերեն, համառոտակի ներածականով ներկայացված է այդ պատմվածքի հեղինակը՝ անդերբնով: Տեքստի յուրաքանչյուր էջի տակ կա նաև բառարան:

Տեքստերի համապատասխան վարժությունները գետեղված են գրքի երկրորդ մասում: Երրորդ մասում (էջ 137—187) տպագրված է հայերեն-անգլերեն բառարան, որտեղ ընդգրկված են տեքստերում գործածված բառերը: Գրքում ղետեղված են Հայաստանի քարտեզը և գրողների նկարները, որոնք զծագրել է Հայկ Թումանյանը:

Ժողովածուում ընդգրկված նյութերը խմբագրել է ղոկտոր Զեյմա Էթմեքճյանը, որը, իմիջիայոց, ղոկտորի աստիճան է ստացել «Ֆրանսիական ազղեցությունը արևմտահայ վերածնդի վրա 1843—1915 թթ.» աշխատության համար:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ԸՆԴՈՒԹՅՈՒՆ, Հայկական Կիլիկիա, տեղագրություն:
Անքիլիսա, տպարան Կարողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիո, 1966,
324 էջ, նկարազարդ:

Հեղինակը տարիներ առաջ շրջագայած լինելով Կիլիկիայում և հետաքրքրված լինելով հայկական հին բերդերով ու վանքերով, ամփոփ ձևով տալիս է Հայկական Կիլիկիայի տեղագրությունը: Գիրքը հայ թշնամի՝ բեղուն կյանքի ընթացքում դանադան առիթներով և տարբեր թերթերի էջերում լույս ընծայած հոդվածների հավաքածու է:

Գրքի առաջարանում Գարեգին եպիսկոպոսը գրում է. «Դուկտ. Հարություն Տեր-Ղազարյանի ներկա հատորին մեջ, առաջին էջն մինչև վերջին էջը Կիլիկիան կպատկերանա ընթերցողին աչքերուն առջև պատմագրական խորքի մը վրա, ուր տեղագրությունը կգրավե կեդրոնական դիրքը Կիլիկյան այս համայնապատկերին մեջ»:

Գիրքը բաղկացած է հինգ մասից: Առաջին մասում, որ վերնագրված է «Տեղագրություն Կիլիկիո», ընդգծված է հայ ժողովրդի պատմության մեջ Կիլիկիայի ունեցած դերը, տրված է Կիլիկիայի անցյալի, նախահայկական շրջանի և միջին դարերում հայ թագավորների գործունեության համառոտ ակնարկը: Հեղինակը հայ և օտար պատմական աղբյուրների հիման վրա ցույց է տալիս, որ մինչև հայ թագավորության ծաղկուն շրջանը Կիլիկիան եղել է հայաբնակ լեռնաշխարհ: Գրքի այս մասում ընդհանուր տեղագրությունից հետո առանձին-առանձին հիշատակված և նկարագրված են Կոռիկոսը, Պապիոտներ, Համրոներ, Սկևոա վանքը, Ոչինի ամրոցը, Սաղրուի վանքը, Մանագը, Տարսոնը, Աղանան, Մսիսը, Անարարզան, Գարսը, Ամուղանը, Թել Համզունը, Սիսը, Ակները, Բարձրբերդը, Կապանը և այլ բերդեր, վանքեր, ղյալկներ ու կառուցումներ: Ընդհանրապես տեղեկություններ

կան նաև Կիլիկյան դետերի, լեռների, գավառների, լճերի, ինչպես նաև դաշտային Կիլիկիայի հայ գյուղերի մասին:

Գրքի երկրորդ մասը վերաբերում է Կիլիկիայի թագավորների կյանքի դրվագներին, ավանդություններին ու ճանապարհորդական տպավորություններին: Գրքի այս մասում առանձին զուխներ են հատկացված Վարդան Այգեկցուն, Կիլիկյան հին մատենագիրներին, Կիլիկյան շրջանից մնացած հայկական արձանագրություններին, Քեսապի շրջանի թուրքական տեղանուններին, ինչպես նաև զանազան գյուղերի, վանքերի, բերդերի, իշխանների ու իշխանահիւնների ընտանեկան ծագման հարցերին:

Երրորդ մասում տեղ են գտել «Սմրատ Սպարապետ», «Սմրատ Սպարապետի տարեգիրքը», «Կոռիկոսի ամրոցը և Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին» զուխները:

«Ակնարկ մը Կիլիկիո Հայոց պատմության վրա» վերնագիրն է կրում գրքի չորրորդ մասը, որտեղ համառոտակի ուրվագծված են Ռուրեն իշխանից մինչև Լևոն Հինգերորդ Լուսինյանի ժամանակաշրջանի դեմքերն ու դեպքերը:

Գրքի հինգերորդ մասում տրված է Կիլիկյան հարստության ժամանակագրությունը: Այստեղ զետեղված են իշխանների, թագավորների և կաթողիկոսների ժամանակագրական ցանկերը, ինչպես նաև անձնանունների և տեղանունների այբբենական ցանկերը: Գիրքը, որ հրատարակել է Լիբանանի Մարաշի Հայրենակցական միությունը, ճշտացված է պատմական հուշարձանների նկարներով, տեղագրական քարտեզներով ու աղագրական նշանակություն ունեցող պատկերներով:

ԹՈՓՃՅԱՆ ԲԱՐԳԵՆ, Կիլիկյան շրջան (1375—1441): Անքիլիսա, տպարան Կարողիկոսության Հայոց Կիլիկիո, 1965, 108 էջ:

Ուսումնասիրության նյութը ընդգրկում է Կիլիկիայի պատմության 1375—1441 թթ. ժամանակաշրջանը, այսինքն Հայոց թագավորության անկումից մինչև հայրապետական աթոռի վերահաստատումը էջմիածնում: Արդարև, այդ վաթսուներեք տարիները, որոնք եղել են հայերի համար տառապանքի ու արտագաղթի տարիներ, բի՛ն ուսումնասիրված մեր պատմության մեջ:

Գրքույկի առաջին մասում հեղինակը տալիս է երկրի քաղաքական կացությունը: Թուփճյանը լայնորեն անդրադառնում է Լևոն Հինգերորդ Լուսինյանի կյանքին ու գործունեությանը, որի թագավորության օրով արդեն իսկ խախտված էր երբեմնի հզոր Ռուբինյան հարստությունը: Հայ ժամանակագիրների և արաբ պատմիչների վկայություններով Լևոնը, չստանալով արևմուտքից

սպասած օժանդակությունը, ստիպված անձնատուր է լինում Հայկաթի ամիրային: Մանրամասն նկարագրված են նրա համառ ջանքերն ու խափած ճիգերը Կիլիկիայի թագավորությունը վերականգնելու գործում:

Լևոն Ե՛ Լուսինյանի մահից հետո (1393 թ.) հայոց թագավորի անվանական տիտղոսը անցնում է Կիպրոսի Լուսինյան թագավորներին և «հայոց թագավորությունը» շարունակվում է մինչև 1510 թ.: Այնուհետև թվարկված են օտար արշավողներն ու իշխողները:

Նրկրորդ մասում ուսումնասիրության նյութ են դարձել հայ-հոռմեական հարաբերությունները, հիմնականում Ֆյորենցիայի կրոնական ժողովրդի և պաշտոնական թղթակցությունները Հոռմի հետ:

Գրքի երրորդ մասը վերնագրված է «Հայերու ներքին կյանքը» (էջ 61—71): Այստեղ շատ համառոտակի խոսվում է շինարարական աշ-

խատանքների, զրական ստեղծագործությունների և կրոնական երևույթների մասին, որոնք շարունակվել են Կիլիկիայի թագավորության անկումից հետո:

Գրքի 13—95 էջերում հավելվածի ձևով տպագրված է «Հրովարտակ սկզբնական միության հայոց ընդ սրբո հոռմեական եկեղեցվո...» փաստաթուղթը, որը 1439 թ. տրվել է Սվզինոս պապին:

Այս հրատարակության վերջում տպագրված են կաթողիկոսների ժամանակագրական ցուցակը, 150-ից ավելի ծանոթագրություններ և մատենագիտական ցանկը: Գրքի առաջաբանում դրված է. Տեր-Ղազարյանը գրում է, որ այս աշխատությունը «կրեք նորություններ Կիլիկիո պատմության թիչ թե շատ մութ մեացած կետերու մասին»:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

ՄԻ ԻՆՏՈՒՍՏՐԱՅԻՆՈՒՄ ԱՆՍԻՆ

Շահամիր Շահամիրյանի հայտնի «Գիրք անուանեալ որոգայթ փառաց» (1773 թ.) քաղաքական-հրապարակախոսական երկը բացվում է մի նկարով, որ ներկայացնում է Ռորինզոն Գրուզոյին: Ամբողջ նկարը հաղեցած է անգործավետ մթնոլորտով, որ գալիս է Ռորինզոնի անվերջ զբաղմունքից և բնության նախաձեռնից: Ռորինզոնը ուներ քչում է ցանկապատված պատասխաններից ներս, նրա գլխի վերև թռչուններն են նախքան անպատ երկնքում, իսկ նկարի խորքում անտառն է՝ բլուր բարիքներ խոստացող շքեղությամբ: Անտառի փնջին աչքի են դարձում օրինջոնյան բնակարանները և այլ կից հարմարություններ: Նկարը խոսում է մարդու և բնության համեմատյալ համակեցության մասին. մարդը օտեղծել է իր ապահով ու խաղաղ կյանքի հարավորությունները, իսկ բնությունն էլ, կարծես, շողում է մարդու այդ երջանկությունից:

Առաջին պահ տարօրինակ է թվում Ռորինզոնի ներկայությունը «Որոգայթ փառաց»-ի մուտքին, բայց Շահամիրյանի երկը, նրա գաղափարական նպատակաուղղվածությունը փառատում են ամեն մի տարակուսանք:

Շահամիրյանը հայ ազատագրական շարժման հայտնի գաղափարախոսներից էր և իր ողջ գործունեությամբ ձգտում էր, որ Հայաստանը ազատագրվի թուրքական ու պարսկական լծից և քառակուսի հովանավորությամբ հաստատի անկախություն: Իր «Որոգայթ փառաց»-ում նա նույնիսկ նախանշում էր ապագա Հայաստանի

վարչակարգը, մանրամասնորեն շարադրում պետական կառուցվածքի իր գրույթները:

Հայ ժողովրդի պատմության վրա արված հետադարձ թույլիկ հայացքով նա հանդում է այն հետևություն, որ շար ու անմիտ տիրակալները «իշուցին մեզ ի պատույ և երջանկութենէ ազատութեան մինչև ի խոնարհ, և վասն միայնոյ այս մեղաց ոչ միայն խոնարհ մեզ արարին յոյժ, այլ զերի այլ ազգաց, նախատինք մարդկանց և արհամարհանք տեսողաց մերոցս»: Այդ բոլորից հետո Շահամիրյանը հիմնավորում ու պատճառարանում է այն նոր ուղին, որը սալահատակված է լուսավորական ազատախոհ գաղափարներով: Պիտավորն այդտեղ մարդու բնական վիճակի նկատառումն է: Մարդու այդ գրությունը դիտվում է միակ բանական, և բանականությունն էլ գլխավոր գաղափարն է՝ հասարակական վերակառուցումները հիմնավորելիս: Տարիներ անց, երբ Շահամիրյանը ձգտում էր իր ծրագրումների գործնական իրականացմանը հասնել, «Որոգայթ փառաց»-ը գնահատում էր գաղափարական այդ գիրքորոշումով: «Տեսարան անուանեալ «Որոգայթ փառաց»,—գրում էր նա վրաց Հերակլ Նրկրորդ թագավորին, 1787 թ. հոկտեմբերի 15-ին,—շարադրեալ վասն ազատութեան ազգին հայոց, ցնծութեամբ բնծայեցի ի սպաս, որում ինքն ցուցանէ կացութիւնն օրինաց իւրոց, բոլորովին բոտ համեմատութեան

Ն. Շ. Շահամիրյանի, Գիրք անուանեալ որոգայթ փառաց, Մազրաու, 1773, էջ 14: